

ԳԱՐԵԳԻՆ Ա ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՄԲ ԲԱՅՎԵՅ ՆՈՐԱՎԱՆՔ-ՌԻՆԴ ՋՐԱՏԱՐԸ

Նոյեմբերի 1-ին Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ վայոց Ջորի Մարգի Ռինդ գյուղում կատարվեց Սյունյաց թեմի և Ամերիկայի Հայոց Արևելյան թեմի ՀՕՑ-ի Գրասենյակի միասնական ջանքերով կառուցված Նորավանդ-Ռինդ 24 կիլոմետրանոց ջրատարի հանդիսավոր բացումը:

Գլխավորելով Ռինդ գյուղի վերակենսավորման համար անհրաժեշտ ջրատարի բացման հանդիսությունը՝ Վեհափառ Հայրապետը իր անձի ներկայությամբ իսկ շեշտեց, որ Հայ Եկեղեցին, Հայոց Հայրապետի առաջնորդությամբ, իր նպաստն ու ծառայությունն է բերում Հայրենիքի ոչ միայն հոգևոր սննդի մատակարարման առաքելության մեջ, այլև ժողովրդի նյութական ու տնտեսական կացությունը բարելավելու և շարգացնելու ձեռնարկներին:



Հանդիսության արարողության ընթացքում շնորհակալական և գնահատանքի խոսքեր ասվեցին Գյուղատնտեսության Նախարարին, Մարզպետին, Գյուղապետին, Առաջնորդ Աբրահամ Վրդ. Մկրտչյանին, Եզնիկ Պալյանին և անհատ գյուղացիների կողմից ջրատարի շինարարությունն իրականացնող Սյունյաց թեմի Առաջնորդին, Ամերիկայի Արևելյան թեմի Առաջնորդ Խաժակ Արք. Պարսամյանին, ՀՕՑ-ի Գրասենյակին և կառույցի մյուս աշակերտներին: Այս ներկայացումներին իր Հայրապետական պատգամն ուղղեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը բարձր գնահատելով Աբրահամ Վրդ. Մկրտչյանի և ՀՕՑ-ի Գրասենյակի հայրենամեջ գործը՝ մեկ անգամ ևս շեշտեց Հայ Եկեղեցու ամփոփական մասնակցությունը հայրենաշինության սրբազան գործին:

Հանդիսությանը ներկա էին Կրոնի Գործոց Կոմիտեի Նախագահ Լազար

Սուբյանը, Գյուղատնտեսության և Պարենի Նախարար Աշոտ Ոսկանյանը, Վայոց Ձորի Մարզպետ Պանդուխտ Մանուկյանը, Ռինդի Գյուղապետ Հուսիկ Սահակյանը, Սյունյաց թեմի Առաջնորդ Արթուր Բաբայանը, Մկրտչյանը, Ռկրահանյի Հայոց թեմի Առաջնորդ Նաթան Ծ. Վրդ. Հովհաննիսյանը, Արտակ Արդ. Տիգրանյանը, Բագրատ Արդ. Գալստյանը, ԼՕՖ-ի Հայաստանի Գրասենյակի Վարիչ Բզնիկ Պալյանը, պաշտոնական այլ անձինք:

ՎԵՀՍՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍԲԸ ՌԻՆԴ ԳՅՈՒՂՈՒՄ

Սիրելի հոգևոր եղբայրներ, հարգարժան մերկայացուցիչներ մեր պետական իշխանության՝ հանձնա Գյուղատնտեսության նախարար պրն. Ոսկանյանի և մարզպետին՝ պրն. Մանուկյանին և շատ սիրելի, թանկահին գաղանթներ Ռինդ գյուղի և շրջակա գյուղերի:

Այս օրը մի պայծառ օր է այս շրջանի պատմության մեջ, և իմ առաջին խոսքով ես ուզում եմ ձեզ բոլորիդ հայտնել, որ 1 մոլեմբերը Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսության պատմության մեջ, պատմագրքի պայծառ էջերից մեկում պիտի արձանագրվի որպես Ռինդ գյուղի օրը մեր Եկեղեցու պատմության մեջ: Բնականորեն, ես էլ զգում եմ, դուք էլ զգում եք, որ սովորական մի դեպք չէ Ամենայն Հայոց մի Կաթողիկոսի համար գտնվել բոլոր գյուղերում: Ես կարող էի այսօր ուղարկել մի եպիսկոպոսի, մի մերկայացուցիչ, որպեսզի մերկայացնեք ձեր բոլորի առաջ մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Ս. Էջմիածինը: Բայց պիտի ասեմ, պիտի խոստովանեմ, որ ցանկանալով ցանկացա անձամբ գալ:

Եկա առաջին հերթին ներքին մի մղումից առաջնորդված, որովհետև ես ծնվել եմ գյուղի մեջ, մեծացել եմ հողի մեջ, ջրել եմ հողը և իմ կյանքը խառնել եմ մինչև իմ տասնչորս տարեկան լինելը՝ հողի հետ, գյուղի մեջ և գեղջկական կյանքի այլազան արտահայտություններում: Տասներեք տարի իմ կյանքումս ես էլեկտրականություն ասված բանը չեմ տեսել. մոմի լույսի տակ եմ սերտել, ուսում առել, մախղի լույսով եմ պարտեզները երբեմն գիշերները ման եկել: Գյուղը իմ մեջ ապրում է այնպես, ինչպես արյունը իմ մարմնի մեջ: Գյուղի կյանքը ինձ համար սքանչելի այն կյանքի ձևն է, որտեղ Աստծու ստեղծած բնությունը և Աստծու ստեղծած մարդը իրար հետ կշաղախվեն ու գյուղից, հողից կյանք դուրս կբերեն: Քաղաքները բնականորեն մարդկային քնկերության զարգացման մեջ կարևոր դեր ունեն: Ես ապրել եմ նաև մեծ քաղաքներում, շատ մեծ քաղաքներում, բայց գյուղի հոգին երբեք չի մեռել, երբեք չի մարել իմ հոգու մեջ և այսօր ձեր գյուղի միջից ողջունում եմ մեր գյուղական բոլոր շրջանները Հայաստան աշխարհում:

Այսօր այս պայծառ ու կապույտ երկնքի ներքո, այս ձյունաբարձ լեռնային գագաթների, այս լեռնային շրջապարի մեջ ես հարց եմ տալիս. Աստված երկնքից ինչպե՞ս է նայում մեզ: Ես զգում եմ, որ Աստված ժպտում է երկնքից ձեզ տեսնելով, ձեր այս հավատարիմ կապաճությունը մեր հողին, հայրենիքին, պետությանը և Եկեղեցիին. և նա, ով ժպիտ կպատճառի Աստծուն՝ Աստծու արժանի գաղակն է, որովհետև մենք կյանք ենք ստացել Նրանից, Նա է տվել մեզ հողը, մենք մեր

ձեռքով չենք ստեղծել հողը և ձեռքերը եղել են հողից կյանք հանելու համար: Դուք իմացել եք անշուշտ Աստվածաշնչի այն առաջին խոսքերից մեկը, որն ասում է. «Մարդն է, որ գործ է գերկիր», և որ քո ճակտի քրտինքովը պիտի շահես քո կյանքը: Դա է Աստծու տված պատգամը: Մեր ձեռքերը եղել են այս հողից կյանք հանելու համար: Քիչ առաջ, երբ դուք ծափահարում էիք ձեր Հայր սուրբին, մեր պետության մերկայացուցիչների խոսքերից հետո, մտքովս մի մտածում անցավ. այս ձեռքերը չեն եղել միայն ծափի համար, այս ձեռքերը չեն եղել միայն ուտելու, խմելու և ծխելու համար, որքան պակասեցնենք ձեռքերի գործածությունը ծուխի համար, որքան պակասեցնենք ձեռքերի գործածությունը խմիչքի համար, որքան զորացնենք ձեռքերի գործածությունը գրիչի համար, դո՛ւք, դպրոցական երեխաներ, իմ պատվական ժողովրդի զավակնե՛ր, որքան ուժեղացնենք ձեր ձեռքերի հպումը հողին, այնքան բարիք կքաղեք, այնքան երջանիկ կլինեք:

Միրելիներ, ես, որ ապրել եմ օտար երկրներում, զգում եմ, տեսել եմ ուրիշների մեջ հպարտությունը իրենց պետությանը, և նախ ով իրեն չի հարգի, թող չսպասի ուրիշից հարգանք, մենք է, որ մեզ պիտի հարգենք, մենք է, որ մեր պետությունը պիտի զորացնենք: Եվ այսօր, հանձին գյուղատնտեսության մախարարին, ես ողջունում եմ մեր պետության հոգածությունը հանդեպ իր ժողովրդին: Եվ իբրև Կաթողիկոս, Հայր ամենեցուն՝ այսօր ասում եմ. սիրելի պետական մերկայացուցիչներ, եթե մինչև հիմա մեկ էիք արել, սրանից հետո երկու և երեք պետք է անեք, որպեսզի արժանի լինեք այս ժողովրդի սիրույն և հարգանքին: Եվ ահավասիկ, այս գաղափարով ողջունում եմ ձեզ և մեր սիրելի մարգպետին՝ պրն. Մանուկյանին, և նաև բոլոր պատասխանատուներին այս գյուղերին, որպեսզի իրենք իրենց մասնակցությունը լայնորեն բերեն ձեզ բոլորի սրտաքաց, պատրաստակամ մասնակցությամբ:

Ասելիք ունեմ տակավին. բոլորդ էլ, վստահ եմ, սպասում եք, որովհետև իմ այս ասելիքը ես քաղում եմ ձեր բոլոր-բոլորի սրտերից, և ծաղկեփունջի մման այս իմ ասելիքը, իբրև գնահատանքի խոսք, ուղղում եմ հոգևոր առաջնորդին և մեր հոգևոր զավակին՝ Հայր Աթառհամին, գնահատելու համար նրա նվիրվածությունը, բացառիկ կարգի նվիրվածությունը: Իրեն հիմնականից մի խոսք եմ ասելու. եպիսկոպոս լինես, կաթողիկոս լինես, բայց վարդապետ լինելուց չդադարես: Իմ գնահատանքի խոսքն եմ ուղղում մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Ամերիկայի Արևելյան թեմի առաջնորդ Խաժակ արքեպս. Պարսապյանին, թեմական խորհրդին և նաև Հայ Օգնության Ֆոնդին և նրա ղեկավարներին՝ գլխավորված պրն. Եզնիկ Պալյանի կողմից: Ես շատ լավ եմ ճանաչում բոլորին, եղել եմ այնտեղ՝ Ամերիկայում, տեսել եմ նրանց: Եվ նրանց հոգածությունը ես նկատում եմ, որպես արտահայտությունը կենդանի, շոշափելի, թանձրական արտահայտությունը իրենց սիրույն՝ հանդեպ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, հանդեպ Առաքելական մեր Եկեղեցու Հայաստանյայց զավակներին և հանդեպ ձեզ՝ այս շրջանի գյուղի բնակիչներին:

Սիրելիք, մի վայրկյան մտածեք: Սրանից հազարավոր մղոններով հեռու՝ Նյու Յորք քաղաքի մեջ նստած հայեր կամ Ամերիկայում տարածված հայեր, որոնք Հայաստանը չեն տեսել, բայց սիրտը, հոգին աշխարհագրություն չի ճանաչի: Սերը սահման չունի: Նրանք աշխատում են, բայց իրենց աշխատանքից բաժին են հանում իրենց հայրենիքին, իրենց Եկեղեցու զավակներին: Մենք պետք ունենք մեր կյանքը ըմբռնելու որպես ծառայություն Աստծու, և Աստծուն, հայրենիքին, Եկեղեցուն, մշակույթին, դպրոցին, գրքին, գրականության մատուցված ծառայությունն է, որ մեզ կերջանկացնի: Հետևաբար, ուզում եմ նրանց էլ հայտնել իմ բարձր աստիճանի գնահատանքը և բոլոր այն անձերին, որոնք անհատապես կամ որպես կազմակերպություն ամերիկյան կամ հայկական իրենց բաժինը բերին այս շքեղ, այս կենսական գործի հաջողության համար: Վերջապես ջուրը Ավետարանի մեջ ամենից շատ գործածված բառերից մեկն է: Ջուրը հացին և լույսին պես կենսական է: Առանց ջրի, առանց հացի և առանց լույսի կյանք չի կարելի երևակայել: Հիսուսն ինքն ասեց. «Ես եմ ջուրը կենդանին»: Ջուրը նյութական է, ջուրը մեր ֆիզիկական գոյության համար անհրաժշտ է, բայց կա ուրիշ ջուր, հոգեկան աղբյուր, հոգիի ջուր, այն ջուրը, որ երբ մարդ կրմպե՝ այն գիտակցությունը, այն գաղափարը, այն հավատքը, այն սերը, այն զոհողությունը, որ մարդս կկենդանացնե, կենդանի ջուր է: Մենք միս ու ոսկո՞ր ենք միայն, ֆիզիկական գոյություն՝ ենք միայն, ուտել-խմելու, հաճոյանալու և մեռնելու կյանքի ընթացք ունենք միայն. ո՛չ, եղբայրներ ու քույրեր: Կյանքը հոգեկան ապրումների, մտավորական ապրումների վայելք է նաև: Եվ դրա համար այնքան ուրախացա այսօր, երբ քայլելով այս գլուղի զառիվերը բարձրացա և տեսա այս երեխաներին. դո՛ւք, սիրելի դպրոցականներ, այնքան ուրախացրիք ինձ: Ես ուզում եմ, որ ձեր դեմքերի վրա միշտ ժպիտ լինի, միշտ՝ նույնիսկ ցավի մեջ: Ժպիտը Աստծու ներկայությունն է մեր մեջ: Կյանքը մենք պետք է լավատեսությամբ դիմավորենք: Մենք այլևս հասել ենք մի այնպիսի գիտակցության, որ այս երկրի ծառան և տերը միանգամայն մենք ենք: Մենք այս երկրի տերը չենք կարող լինել՝ առանց այս հողի ծառան լինելու: Ես չեմ կարող Եկեղեցու պետ լինել՝ առանց այդ Եկեղեցու ծառաների ծառան լինելու: Ես չեմ եղել որպես Կաթողիկոս Աթոռի, գրասենյակի համար: Ես ուզում եմ լինել Կաթողիկոս ժողովրդի համար, ժողովրդի մեջ և ժողովրդի հետ: Այս է քրիստոնեական ըմբռնումը մեր Եկեղեցու. և այսօր ձեզ եմ այս օրը ձեզ նվիրելու, որպես Աստծու թարգմանությունը ձեր կյանքում և այս ջուրը թող լինի ոչ միայն նյութեղեն ջուր ձեր հողերը ոռոգելու համար, այլ այս ջուրը լինի նաև հոգևոր, բարոյական, ազգային, մշակութային վերանորոգում այս երեխաների և գալիք սերունդների համար: